

Էդիկ Մինասյան, Բենիամին Մայիլյան, Հայկ Մխոյան, Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները 20-րդ դարում. պատմություն և մարտահրավերներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 152 էջ:

Է. Մինասյանի, Բ. Մայիլյանի, Հ. Մխոյանի՝ Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների ուսումնասիրությանը նվիրված կոլեկտիվ մենագրությունը բովանդակում է Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում հայկական համայնքների պատմության բազմաթիվ հիմնախնդիրներ՝ հասարակական-քաղաքական, կրթամշակութային, հոգևոր և այլն, մասնավորապես աշխատության էջերում ուսումնասիրության են արժանացել Հյուսիսային Կովկասի հայության թվաքանակը, տեղաբաշխման շրջանները, մայրենի լեզվի իմացության աստիճանն ու գրագիտությունը և այլ հարցեր: Հայկական յուրաքանչյուր համայնք ներկայացվում է իր կազմավորման պատմությամբ, նշված երկրամասում հայերի ունեցած ձեռքբերումներով, ինչպես նաև համայնքային բազմաբնույթ խնդիրներով և այդ երկրամասում ապրող հայերի առջև ծառայած մարտահրավերներով, ինչը փաստում է՝ համայնքների պատմությանն առնչվող վերլուծությունները, եզրակացությունները միակողմանի չեն:

Հեղինակներն հայկական համայնքների ուսումնասիրությունն իրականացրել են արխիվային փաստերի ու վիճակագրական տվյալների հիման վրա՝ սկզբնաղբյուրների և գրականության քննական ուսումնասիրության արդյունքում ընդգծելով հայ ժողովրդի պատմության անքակտելի մաս կազմող հայկական համայնքների պատմությունը լուսաբանելու անհրաժեշտությունը, ինչպես նաև դրանց լուրջ դերակատարումը ոչ միայն հայապահպանության, այլև հայրենիք-սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործում: Հարկ է արժևորել հատկապես Հյուսիսային Կովկասի տարբեր երկրամասերում եկեղեցիներին կից գործող կիրակնօրյա դպրոցների և մշակութային բազմաթիվ կառույցների գործունեությունը հայապահպանության, ազգային մշակույթի, մայրենի լեզվի տարածման ու քարոզչության իրականացման ուղղությամբ:

Աշխատության հեղինակները հանգամանորեն քննության առարկա են դարձրել ժամանակային ընդգրկումով (նախախորհրդային, խորհրդային, հետխորհրդային տարիներ) աչքի ընկնող հիմնախնդիրների մի ամբողջ շարք: Հարկ է նկատել, որ հայ պատմագիտության էջերում խորհրդահայ համայնքներին նվիրված գիտական առանձին ուսումնասիրությունների թիվը մեծ չէ: Առավելապես առկա են խորհրդահայ տարբեր համայնքներին առնչվող մասնակի անդրադարձներ ու հպանցիկ ակնարկներ: Բացառություն են կազմում Հ. Ալեքսանյանի երկու լայնածավալ մենագրությունները, որոնք վերաբերում են 1917-1991 թթ. խորհրդահայ համայնքների պատմությանը, ինչպես նաև մի շարք այլ հոդվածներ ու հրապարակումներ: Ուսումնասիրության արդյունքում ընթերցողի սեղանին է դրվել Հյուսիսային Կովկասի երկրամասերի ամբողջական պատմությունն ընդգրկող համապարփակ աշխատություն, որը 20-րդ դարում ՌԴ հայկական համայնքների պատմության համապատկերում Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքը մեկ ամբողջության մեջ դիտարկելու համեստ փորձ է: Ընդգրկում աշխատության էջերում հանգամանորեն վերլուծված են Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների ձևավորման և զարգացման պատմությունը, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերի հիմնախնդիրները, զարգացման պատմական փուլերն ու առանձնահատկությունները:

Հեղինակների կողմից ընթերցողի դատին ներկայացված մենագրությունը արժեքավոր է: Աշխատության երեք գլուխներում համակողմանիորեն առաջ են քաշվում և վերլուծվում խիստ արդիական հարցեր՝ վերոնշյալ երկրամասերի հայկական համայնքների ժողովրդագրական իրավիճակը 20-րդ դարում, սոցիալ-տնտեսական, հոգևոր-ե-

կեղեցական, կրթամշակութային կյանքին առնչվող պատմական բազմաթիվ իրողություններ:

Աշխատությունն ունի հետաքրքիր և կուռ կառուցվածք: Պատմական ակնարկի հենքով բնութագրվում է Հյուսիսային Կովկասի տարբեր երկրամասերում հայկական համայնքների ձևավորման պատմությունը, իսկ հաջորդող երկու գլուխներում նախ ներկայացվում են տվյալ համայնքի կազմավորումն ու զարգացումը, այնուհետև անդրադարձ է կատարվում հայկական նշված համայնքի ժողովրդագրական պատկերին, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, հոգևոր-եկեղեցական ոլորտներում առկա ձեռքբերումներին ու բացթողումներին:

Աշխատության առաջին «Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների ձևավորումն ու զարգացումը 18-19-րդ դարում» գլխում լուսաբանվել է հայկական համայնքների ձևավորման և զարգացման պատմությունը նշված ժամանակահատվածում: Նշված գլխում պատմաքննական հանգամանալից և խորքային վերլուծության են ենթարկվել հատկապես Ղզլարում, Մոզդուկում, Աստրախանում վաճառականությամբ զբաղվող հայերի իրավունքները, արտոնությունները: Հեղինակների շեշտադրմամբ հենց կայսերական հրովարտակում տեղ գտած արտոնությունների հիման վրա և դրանց շրջանակներում էլ ձևավորվել է Ղզլարի և Մոզդուկի հայկական գաղթավայրերի ինքնավարությունը (էջ 19): Ուշագրավ է, որ Ղզլարից և Մոզդուկից բացի՝ Եկատերինոդարը, Ստավրոպոլը, Վլադիկավկազը և այլ երկրամասերի առաջին բնակիչները եղել են հայ վաճառականները: Նրանցից շատերը մշտական բնակություն են հաստատել վերոնշյալ տարածքներում՝ սկիզբ դնելով հայկական գաղթօջախների պատմությանը (էջ 14): Գետրգիևսկը և Կովկասյան գծի մյուս բերդաքաղաքների հարուստ տոնավաճառները եղել են հայ վաճառականների կենտրոնատեղիները:

Հայկական համայնքներից շատերը ձևավորվել են սահմանափակ տարածքների վրա, ստիպված են եղել ինքնուրույն վարել համայնքի տնտեսական գործերը: Այս ամենը բնավ էլ չի խանգարել, որ նշված համայնքը զարգացում ապրի՝ հետագայում ևս պահպանելով ազգային ինքնատիպությունը, կենցաղավարության, վարքուբարքի և նիստուկացի մեջ վաղեմի սովորույթներով առաջնորդվելու ձգտումը:

Ձևավորվելով օտար միջավայրում՝ նշված համայնքները ոչ միան չծուլվեցին տարալեզու խառնարանում, այլև ազգային սովորույթների, բարքերի անխոնջ հետևողականությամբ պահպանեցին ազգային դիմապատկերը: Առանձին համայնքներով հաստատվելու հանգամանքը հայ համայնքներին ձերբազատում էր դրսի անհարկի և օտարամուտ միջամտություններից: Եկեղեցու, դպրոցի, ազգային և հասարակական զանազան կազմակերպությունների շուրջը համախմբված կովկասահայերը հետագայում ևս կարողացան պահպանել ազգային ինքնատիպությունը, կենցաղավարության, վարքուբարքի և նիստուկացի մեջ վաղեմի սովորույթներով առաջնորդվելու ձգտումը:

Աշխատության երկրորդ՝ «Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքները 20-րդ դարում. պատմություն, ժողովրդագրություն» գլխում քննվել է Կրասնոդարի հայկական երկրամասի հայկական համայնքի ձևավորման, զարգացման պատմությունը՝ հետխորհրդային տարիներին նշված երկրամասի հայկական համայնքների դրությանը կատարած անդրադարձով:

Հյուսիսարևմտյան Կովկասի հնաբնակ հայերը հիմնականում բնակվել են Արմավիր, Եկատերինոդար և այլ բնակավայրերում: Կուբանի տարածքում ժամանակագրական առումով հայերի առաջին խումբը կազմել են չերքեզահայերը (էջ 40): Կան ուշագրավ դիտարկումներ, եզրահանգումներ, որոնք բխում են ներկայացվող նյութի համապարփակ քննության սկզբունքից: Հայերի վերաբնակեցումը նշված երկրամասում հեղինակները բնութագրում են ակտիվության բացակայությամբ: Պատկերը փոխվում է հետխորհրդային տարիներին, երբ հայկական միգրացիայի սահուն աճով պայմանավորված նշված երկրամասում փոխվում է նաև ժողովրդագրական իրավիճակը: Ներկայումս Կրասնոդարի երկրամասի հայկական սփյուռքը պատկանում է հայ էթնիկ հանրության տարածաշրջանային ամենամեծաթիվ խմբերին:

Աշխատության երրորդ՝ «Ստավրոպոլի հայկական համայնքը 20-րդ դարում. պատմություն, ժողովրդագրություն» գլխում քննության են առնված Ստավրոպոլի երկրամասի հայկական համայնքների ժողովրդագրական իրավիճակը, հոգևոր-եկեղեցական, կրթամշակութային կյանքը, տեղի հայության ձեռքբերումներն ու նրանց գործունեության տարբեր ոլորտներում առկա բացթողումները: Հայությունը Ստավրոպոլի երկրամասում բավական ակտիվ դերակատարում ունի և համարվում է տեղի հիմնական բնակչությունը, որը վաղուց ինտեգրվել է բնիկ հանրությանը՝ յուրացնելով ռուսերենը, ստեղծելով ազգային կառույցներ և կազմակերպություններ: Աշխատության հեղինակները ցավով են արձանագրում, որ նշված երկրամասում հայությունը աստիճանաբար դադարում է կիրառել մայրենի լեզուն (էջ 118):

Հեղինակները փաստում են, որ Հյուսիսային Կովկասի հայաշատ կենտրոններում՝ Պյատիգորսկում, Կիսլովոդսկում, Վլադիկավկազում, Ստավրոպոլում և բազմաթիվ այլ բնակավայրերում ազգային կյանքի օջախների դեր կատարող հայկական հաստատությունները հայրենանվեր գործունեություն են ծավալել մինչև Հայրենական մեծ պատերազմը: Կրթօջախների զգալի մասը լուծարվել են պատերազմյան և հետպատերազմյան հենց առաջին տարիներին (էջ 137):

Երկրորդ՝ «Ստավրոպոլի հայկական համայնքը 20-րդ դարում» գլխում, քննության են առնվել Ստավրոպոլի երկրամասի հայկական համայնքների ժողովրդագրական վիճակը 20-րդ դարում, երկրամասի հայության հոգևոր-եկեղեցական կյանքը: Հեղինակները նշված գլխում ուշագրավ եզրակացություններ են կատարել: 1918-1920 թթ. և դրան նախորդած տարիներին Դոնի հայաշատ համայնքները չեն մտել Հյուսիսային Կովկասի աշխարհագրական և վարչատարածքային սահմանների մեջ, միայն 1920 թթ. է խորհրդային իշխանությունը Հյուսիսային Կովկասը և Դոնը ժամանակավորապես միավորել երկրամասի մեջ: Ընդ որում՝ որոշ ժամանակ անց արգելվել է գաղթականների մուտքը քաղաքներ տեղական իշխանությունների կողմից արգելվեց:

Կարևոր է նշել, որ աշխատության հեղինակները յուրաքանչյուր համայնքի անդրադարձ կատարելիս, տեղի հայության ձեռքբերումներից բացի, ներկայացրել են նաև համայնքային կյանքի տարբեր ոլորտներում առկա բացթողումները: Անաչառ վերաբերմունքով ամրագրվել են կազմակերպչական խնդիրները, հայապահպանությունն ու հայկականությունը վտանգող մի շարք մարտահրավերներ: Հյուսիսային Կովկասում բնակվող հայությունը լիարժեքորեն ներգրավվել է ԽՍՀՄ-ում ընթացող հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացներին՝ կրելով ժամանակի տարաբնույթ մարտահրավերներն ու խնդիրները: Հոգևոր-մշակութային կյանքը խորհրդահայ համայնքներում 1917-1941 թթ. ապրել է բեկումնային ժամանակաշրջան՝ ունենալով կարճատև ձեռքբերումներ ու զարթոնքի ժամանակաշրջան, որին, 1920-1930-ական թվականներից սկսած, հետևել է ազգային դիմագծի աստիճանական կորստի շրջան:

Համոզված ենք՝ պատմական փաստերի վերլուծության սկզբունքով և գեղեցիկ հայերենով շարադրված, կուռ կառուցվածքով աչքի ընկնող այս արժեքավոր աշխատությունը նոր խոսք է հայկական համայնքների պատմական ուսումնասիրությունների շարքում: Այն կարող է զգալի հետաքրքրություն ներկայացնել և ուղղորդիչ արժեք ունենալ հայկական համայնքների պատմության, մասնավորապես Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերի հայկական համայնքների հարցերով զբաղվող մասնագետների, միջազգայնագետների, ուսանողների և ընթերցող լայն հանրության համար:

Մերի Հովհաննիսյան

ԵՊՀ ՀՀԻ հայոց պետականության պատմության հիմնահարցերի հետազոտության բաժնի գիտաշխատող, բ.գ.թ.